

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ,,

Հ Ա Յ Ե Գ Ի Տ Ը Կ Ը Ն Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ը Թ Ե Ի Թ

ՅԱ. ՏԱՐԻ — 1937

Կը խմբագրուի եւ կը հրատարակուի

ՄԵԽԻԹԱՐԻՏԵՆ ՄԻՇԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵՆԻ Ի ՎԻԵՆԱՆ ԱՇԽԱՏԱԿՈՒԹԵԱՄԸ ԱԳՁԱՅԻՆ ԵՆՕՄԱՐ ԲԱՆՍԱԷՔՆԵՐՈՒ:

Որպէս զի աւելի մատչելի դառնայ Ուսումնասիրութիւնն օտարալեզու արեւելագետներուն. յոմբագրութիւնս շարունակաբար պիտի ներկայացնէ նաեւ կարեւոր բանասիրական յօդուածներուն համառոտ մէկ ամփոփումը, միջազգային որ եւ է լեզուաւ:

Բաժանորդագիրն է առհն նորիի համար՝ 1 ֆռանկ ստեղծից, կամ յիսկ:

Մեր հասցէն՝

REDACTION DE LA REVUE “HANDES AMSORYA,” VIENNE (Autriche), VII., Mechitharistengasse 4.

Թ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մէկ տարուան “Հանդէս Ամսօրեայ” կը նուիրեն՝ Պր. Յակոբ Մուշեանեան (Պրովզիւ)՝ Հրայր-Վահան Ընթերցարանին ի Պուրկազ, եւ Պր. Պետրոս Թեղաշեան (Պրովզիւ) Պետո Սէրէմճեան Ընթերցարանին ի Պրովզիւ:

ԽՄՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ո Ր Հ Ր Ը Տ Ա Ր Ը Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(Խմբագրութեանն ուղարկուած:)

Ազատեան Յակոբ, Ազրիանապոլսոյ Հայ Գաղութը. հրտ. Ազրիանապոլսեցիներու Արշակունեաց Հայրենակցական Միութեան Ի Բրովտիվ: Բրովտիվ, տպ. Նոր Տառ, 1935, էջ 166: Գինն՝ 15 Ֆր.:
Արմէն-Սիւնի, Կարմիր-Կանաչ, Ա. շարք (1932—1934): Պէյրութ, տպ. Տօնիկեան, 1936, էջ 60:
Արտաւագդ Արքեպիսկոպոս, Հոգաբարձութիւնը Հին Երբայեցոց մէջ: Երախայրիք տասանորդ: Հալէպ 1937, 80, էջ 72:
Գալայեան Յ. Վ., Զօներդ (քառաձայն խմբերդ) առ Յովհաննէս արք. Նազրեան իր եպիսկոպոսութեան քսան եւ հինգ ամեայ յորեկինն առթիւ: Պէյրութ 1936, էջ 4: Գինն՝ 3 Ֆր.:

Զարմուի Օ., Գորշ երկնքի տակ (բերթուածներ): Սոֆիա, տպ. Պ. Պալըզճեան, 1932, էջ 64: Գինն՝ 5 Ֆր.:
— Երգ յաւերժական (բանաստեղծական հէքեաթ): Սոֆիա, տպ. Պ. Պալըզճեան, 1936, էջ 16: Գինն՝ 2 Ֆր.:
— Ծաղիկ կը վնասուի (բերթուածներ): Սոֆիա 1928, էջ 32:
Էջմիածնեցի, Տաննուհինք տարի բուրձեւեկեան երկիրներու մէջ: Պոսթրն, տպ. Հայրենիքի, 1935, էջ 236: Գինն՝ 1 տոլ.:
Ընդարձակ Տարեգիրք Ազգային Հիւանդանոցի: Նոր Երջան, ԺԳ. տարի, 1937: Իսթանպուլ 1937, 80, էջ 420: Գինն՝ 200 զր.:

“HANDES AMSORYA,,

MONATSSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOLOGIE

LI. JAHRGANG — 1937

Herausgegeben und redigiert von der MECHITHARISTEN-KONGREGATION IN WIEN unter Mitwirkung zahlreicher Armenisten.

Um unseren nichtarmenischen P. T. Abonnenten die Benützung unserer Zeitschrift zu erleichtern, werden wir fortlaufend von den wichtigen philologischen Abhandlungen ein kurzes Resümé in einer europäischen Sprache geben.

Preis dieses Jahrganges £ 1.—.

Unsere Adresse:

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ,, Ի ՅԻՄՆԱՄԵԱԿԸ

1887—1937

Հայ պարբերական հանդէսներու թուին մէջ միակը չէ Ուսումնասիրութիւն, որ կը բոլորէ իր յիսնամեայ շրջանը. քայց առաջինն է հայագիտական ասպարէզի վրայ, որ կը կատարէ իր յիսնամեայ ընթացքը:

Չենք ուզեր լուծեամբ դիտել Ուսումնասիրութիւն այս կիսադարեան կեանքը, առանց յետահայեաց ակնարկ մը նետելու անոր գրական տոհմականներու վրայ, զոր շտեմարանն է իր լայն ծոցին մէջ հայագիտութեան համար:

1887ին, երբ առաջին անգամ ասպարէզ կ'իջնար Ուսումնասիրութիւն, Հայագիտութեան չէր շնորհուած այն ուշադրութիւնը, որուն արժանի էր: Ժամանակակից ուսումնասիրութիւններ լեզուագիտական, աշխարհագրական, պատմական, մատենագրական եւ այլ զանազան հարցերու մասին: Հայագիտութիւնը կ'ապրէր իր մանկական հասակը. շատ բանասիրական հարցերու կը միծնցուէր աւանդապաշտ ըմբռնումներով:

Չէր կրնար յաւակնիլ “Հանդէս Ամսօրեայ” առաջին քայլին իսկ երեւան գալ “հայագիտական” դրօշին տակ: Անիկա լոյս տեսաւ “Հանդէս Ամսօրեայ, քարոյսկան, ուսումնական եւ արուեստագիտական” ուղղութեամբ: Առաջին տասնեակին հետեւեցաւ այս ուղղութեան: Դիտող աչքէն անխուսափելի էր սակայն, թէ Ուսումնասիրութիւն ծանրակէտը կը միտէր դէպի հայագիտութիւն: Երեւցան հոն Այտընեան, Յովհաննեան, Տէրվիշեան անունները, որոնց յարեցան ապա Գալէմբեարեան, Մէնէվիշեան, Տաշեան, Ն. Մառ, A. Carrière, Ա. Սարուխանեան եւն եւն, որոնք տուին մասնագիտական աշխատութիւններ հայ լեզուի, պատմութեան եւ մատենագրութեան հայտը: “Հանդէս Ամսօրեայ” նկատուեցաւ այնուհետեւ ժամադրաւայր մը բանասէր, պատմագէտ, գրագէտ մասնագէտներու: Երկրորդ տասնամեակին “Հանդէս Ամսօրեայ” վերածուած էր արդէն զուտ հայագիտական ուսումնասիրի, թէեւ այս անունը պաշտօնապէս երեւցաւ իր ճակատին առաջին անգամ 1912ին, երբ բոլորեց իր 25ամեակը:

“Հանդէս Ամսօրեայ” ի Յուշարձանը, լոյս տեսած 1916ին առթիւ 25ամեակին աշխատակցութեամբ 40 հայ եւ օտար մասնագէտ-հայագէտներու եւ Յիշատակարանը, լոյս տեսած 1927ին առթիւ 40ամեակին աշխատակցութեամբ 34 օտար հայագէտներու, խօսուն ապացոյցներ էին այն համակրութեան, զոր կը տածէր հանդէպ “Հանդէս Ամսօրեայ” ի հայագիտական ուսումնաբք պարապող գիտական աշխարհը:

Դժուար է հոս սակաւ տողերու մէջ, առանց ինքնագովութեան ծոցը իյնալու վտանգի, վեր հանել այն արդիւնքները, զորոնք “Հանդէս Ամսօրեայ” ընթացս 50 տարիներու ընծայեց հայագիտութեան: Ունինք մեր առաջ 50 հատորներ. բաւական է աչք նետել, հարեւանցի իսկ, անոնց ընդգրկած բովանդակութեան վրայ, տեսնելու համար հունձքի առատութիւնը:

Հայագիտութեան հաստարուն, քարձրաբերձ, բազմուղեղ ծառին մէն մի ճիւղ նկատի առնուած է հոն մասնագիտական գննութեամբ, առաւել կամ նուազ ծաւալով: Նկատուած է հայ Աշխարհը իր պատմական սահմաններու մէջ. հայ ժողովուրդը իր ընդհանրականը եւ գաղթականութեան մէջ. հայ լեզուն նախագրական եւ գրական

չըջաններու մէջ. գրականը, ուսմանը, կենդանի բարբառն եւ գաւառաբարբառները իրենց ստորաբաժանմանց մէջ, հնախօսական, լեզուագիտական եւ պատմական տեսակետներէ: Ուսումնասիրուած է Հայոց պատմութիւնը իւր նախա- եւ պատմական դարաշրջաններուն, կից Հայոց Եկեղեցւոյ պատմութիւնը իւր զանազան փուլերու մէջ: Առանձին նախասիրութեամբ ուշադրութիւն դարձուած է յատկապէս հայ հին եւ միջին դարերու մատենագրութեան, թէ ինքնագիր եւ թէ թարգմանական, առանց անտեսելու ուսմանը եւ նոր գրականութիւնը: Լոյս տեսան «Հանդէս Ամսօրեայ», ի էջերու մէջ յօրինուածական ցուցակներ զանազան մատենադարաններու մէջ, նաեւ անհատականներու քով պահուած հայերէն ձեռագիրներու. հրատարակուեցան անտիպ ընագիրներ. ուսումնասիրուեցան գիտութեան նոր լոյսի տակ հայ պատմագիրները, միջնադարեան տաղասացները, բժշկական գրականութիւնը: Նուիրուեցան ուսումնասիրութիւններ հայ հնագրութեան, գեղարուեստի եւ ճարտարարուեստի: Հայերէն թարգմանութեամբ մատչելի դարձան Եւրոպացի գիտնոց հայագիտական աշխատութիւնները: Մատենախօսական եւ Մատենագիտական բաժիններով տեղեակ պահեց Ուսումնասիրութիւնը իւր ընթացողները հայագիտական հրատարակութիւններու:

Արդեամբ «Հանդէս Ամսօրեայ», ի կազմուեցան այլ եւ այլ մատենաշարքեր, որոնք կ'ամփոփեն իրենց ծոցը մասամբ Ուսումնասիրութիւն արտատպութիւններ, մասամբ ինքնուրոյն աշխատասիրութիւններ. կը յիշենք. 1. Ազգային Մատենադարան, 145 հատոր եւ 2. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, լոյս տեսած ցայժմ՝ 13 հատոր:

Այս եւ նման արդիւնքներ ծրարեց «Հանդէս Ամսօրեայ», իւր ծոցը: Կը հարցնենք. Պիտի շահէր հայագիտութիւնը այլուստ այս հունձքը, եթէ գոյութիւն չունենար «Հանդէս Ամսօրեայ»:

Իբրեւ «հայագիտական ուսումնասիրութիւն», կարելի էր արդէն ի յառաջագունէ գուշակել, թէ պիտի բախէր «Հանդէս Ամսօրեայ», իւր ճանապարհին վրայ տնտեսական դժուարութիւններու: Զուտ մասնագիտական, թէեւ ազգային մշակոյթին նուիրուած, ուսումնասիրութիւն մը չէր կրնար յուսալ թէ պիտի գտնէ իր առաջ ընթացողներու լայն շրջանակ, որոնց բաժանորդագրութեամբ ապահովէր իւր տպագրութեան ծախքերը: Դժբախտաբար այս իրականութիւն եղաւ յընթաց 50 տարիներու, չհաշուելով սակաւատեւ լիութեան տարիները: Միխիթարեան Միաբանութիւնը, որուն հովանւոյն տակ լոյս կը տեսնէր Ուսումնասիրութիւնը, եղաւ յայսմ իր Մեկենասը: Զոհողութիւնը, զոր յանձն առաւ Միաբանութիւնս ի շահ հայ ուսմանց բարգաւաճման, գտաւ իւր բաւականութիւնը այն արդիւնքին մէջ, զոր տուաւ Ուսումնասիրութիւն հայագիտութեան:

Երախտագէտ զգածումներով պարտաւոր ենք յիշել հոս ազգասէր եւ հայ գրականութիւնը քաջալերող երկու մեծարոյ անձնաւորութիւններ, Պօղոս Նուպար փաշայ եւ Տիար Գալուստ Կիւլպէնկեան, որոնք բարեացակամ առատածնունդութեամբ յանձնատու եղան թեթեւացնել Միաբանութեանս բեռը, առաջինը «Հանդէս Ամսօրեայ», ի 1927 եւ երկրորդը 1928—1930 տարիներու ծախքերը հարթելու համար:

Եւրոպայի մէջ մասնագիտական ուսումնասիրութիւնը պետական միջոցով եւ կամ նպաստաւորութեամբ զանազան ընկերակցութեանց կը պահպանեն իրենց գոյութիւնը. «Հանդէս Ամսօրեայ» ուրախ պիտի ըլլայ, եթէ անելով ընթացողներու թիւը, բաժանորդագիրներով հաւասարակշռէր իր ծախքերը եւ հնարաւորութիւն ունենար ընդլայնելու իւր էջերը:

ԽՍՏԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ», Ի:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 1-5 3 ՈՒՆՈՒԱՐ—ՄԱՅԻՍ ԺԱ. ՏԱՐԻ 1937

ՀԻՆ ՀՈՅՈՍՏՅԱՆ ԵՐԵՒՄՏԵԱՆ ՍՈՒՄՆԵՐԹ ՓՈՔՐ-ՀՈՅՔ ԵՒ ԿՈՂՈՓԵՆԷ (ՍԵՐԱՍԻՆՈ)

ԳՐԵՑ Հ. Յ. ՏԱՇԵԱՆ

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Հանգուցեալ Հ. Յ. Տաշեանի ձեռագիր մնացորդներէն հանելով կը հրատարակեմք այս աշխատութիւնը: Հեղինակը գրած էր գայն 1910ին, Կ. Պոլիս, իբրեւ պատասխան իրեն եղած հարցման մը, ինչպէս ինքնին կը բացատրէ Մուտփին մէջ:

Հեղինակին փափագն էր լրացնել աշխատութիւնս նոր նիւթերով, գործնք չէր կրցած ի Կ. Պոլիս ձեռք բերել. նաեւ ընդարձակել ներս առնելով իսպառիքն եւ Տայֆ եւ Բարձր Հայֆ, որոնք երկար ժամանակ գտնուած են Բիւզանդական իշխանութեան տակ եւ այսպէս նոյն ազդեցութեան ենթարկուած քաղաքապէս, տնտեսապէս եւ քաղաքակրթապէս:

Վիեննա վերադարձէն ետքը, որքան առողջութիւնը քոյլ կու տար, կ'աշխատէր այս ուղղութեամբ: Կը գտնեմք իր ձեռագիր մնացորդներու մէջ արդէն ըստ մասին կատարուած աշխատութիւններ Բարձր Հայֆի, Տայֆի եւ Իսպառիքի վերաբերեալ: Ամբողջը իրարու հետ կապելու եւ Սեբաստիայի մասին գրածը նոյնացնելու ծրագիրը չէր կրցած սակայն իրականացնել:

Հ. Յ. Տաշեանի գրչէն բոլորով մէկ մի տող քանակարժէք է. եւ կը համարեմք թէ սիրով պիտի ողջունեն աշխատութեանս հրատարակութիւնը ամէն անոնք, որոնք կը հետաքրքրուին Հայաստանի աշխարհագրական եւ պատմական ուսումնասիրութիւններով:

Այնպէս, ինչպէս ելած է աշխատութիւնս մեծանուն Հեղինակին գրչէն, առանց փոփոխութեան, կը ներկայացնեմք «Հանդէս Ամսօրեայ»-ի էջերու մէջ: Հեղինակին արտայայ-

տութիւնք տեղ տեղ մուք են, արդիւնք հապանեպ գրութեան: Կարեւոր համարեցանք մուծել ստորաբաժանումներ (1, 2...) ի դիւրութիւն նիւթին հասկացողութեան:

ԽՍՏԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ»

Հարցում մ'ուղղուած էր մեզի պատասխանելու կամ կարծիք յայտնելու՝

«Կտակազրի մը մէջ Հին Հայաստանի սահմաններում բացատրութիւնը գործածուած ըլլալով, ըստ մեզ Սեբաստիան կը նկատուի այդ սահմանին մէջ. սակայն այս մասին Ձեր կարծիքն ալ լսել ուզեցանք» են:

Խնդիրն ուրեմն կտակի մը որոշման վրայ է: Կտակին բուն բնագիրը մեզի անձանօթ է, եւ բաց աստի կտակ մը մեկնելու իրաւասու չենք համարիր զմեզ: Բայց որչափ մեզի այլուստ ծանօթ է՝ կտակին յօրինման եւ կատարման հետ սերտ կապ ունէր ծանօթ բանասէր մը (Կ. Եղեանց). ուստի կտակին բաներն ալ կ'ընտրուած ըլլալու են, ո'չ հարեւանցի կամ անբանասիրական իմաստով: Ուստի «Հին Հայաստանի սահմաններում» բացատրութիւնը կ'առնունք քննութեան՝ բանասիրական տեսակէտով, եւ ասոր իբր պատասխան կը ներկայացնենք յաջորդ ակնարկը:

Ա.

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՆԳԱԾՆԵՐԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՄԱՍԻՆ

1. «Փոքր Հայֆ» խնդիրը:

Բանասիրութեան տեսակետով՝ պարզ երեւցած խնդիրս շատ ալ պարզ չէ: Սեբաստիա հին Հայաստանի անմիջական սահմանակիցը չէր. կար միջանկեալ «Փոքր»-Հայք մը, որուն հետ յետոյ ձուլուեցաւ վարչապէս: Խնդիրն է ուրեմն՝ ի՞նչ աղերս ունին «Փոքր-Հայք» բուն հին Հայաստանի հետ. եւ ի՞նչ աղերս կողովենք (Սեբաստիա